

լու, առանց բառ մը փոխանակած ըլլալու հետը:

Ոչ ոք զիտցաւ Օտեանի սրտին գաղտնիքները. նոյնիսկ իր մտերիմներէն ծածուկ պահեց իր սիրտը: Կինը ճանչցա՞ւ Օտեան, ու սէրը վարակե՞ց այս սկեպտիկ մարդուն հոգին, որ հաւատարմութեան չէր հաւտար:

Իր երիտասարդութեան մտերիմներն անգամ կ'անդիտանան լուրջ սիրոյ մը պատմութիւնը Օտեանի մէջ: Ու արդէն կինը զրեթէ տեղ չունի Օտեանի զբաղանդութեան մէջ, կինը, գլխազրով կինը: Իր լուրջ վէպերուն մէջ անգամ հազիւ հպանցած է կնոջ տիպարներուն: Կնոջ հոգին փակ կը մնայ իրեն:

ԻՐ ՄՏԵՐՄ ՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օտեանի մտերիմները զբաղան աշխարհէն կուզային իրեն: Հինէն, ու տեւեցին մինչեւ վերջ:

Արիւիար Արիւիարեանն էր եղեր առաջին մարդը որ դրոշմ դեր էր վրան. ան յետոյ ալ ու մինչեւ իր եղբարական մահը իր սրտին կապուած մնաց: Օտեան միշտ ալ գուրգուրանքով կը յիշէր անոր սնունդը:

Ու Լեւոն Բաշալեանն էր իր շատ սիրած մարդոցմէն մէկը. անոր մէջ կը սիրէր իր խանդավառ երիտասարդութիւնն իսկ, որովհետեւ մէկ սեղանի շուրջ էին ըրեր իրենց զբաղան առաջին մարդանքը:

Օտեանի սիրած մարդոցմէն մէկն ալ հալառակորդ բանակէն էր, կատաղի Դանաւիկահան մը, Բարսեղ Շահպաղը: Անոր հետ նոյնիսկ Աղեքսանդրիոյ մէջ «Կրակ»ը հրատարակեր էին: Պոլսոյ մէջ 1910-ին ստեղծուած թունաւոր մթնոլորտը պահ մը գթացուց այս երկու բարեկամներն ալ, զինտան մը մէջ կուսակցական վէճի մը պահուն: Յետոյ դարձեալ սիրեցին զիրար:

Տիրան Քէլէկեանն ալ տեղ ունէր իր սըրտին մէջ, թէեւ շատ հաշտ չըլլար Կեսարացիներուն հետ: Ինքը կը պատմէր, թէ Քէլէկեանի տունը, ճաշի մը պահուն, աղջիկը կը հարցնէ հօրը որ օտար զերդաստաններու պէս իրենց ընտանիքն ալ նշանաբան ունի՞: Հայրը կ'անգիտանայ. բայց Օտեան միջամտելով կը յարէ, թէ բոլոր Կեսարացի ընտանիքները, իբրեւ ազնուական զերդաստան, միակ նշանաբան մը

ունին. «Ներկեա՛ եւ կրկին վաճառեա՛»:

Երուանդ Սրմաքէշխանլեանն ալ մէկն էր Օտեանի մտերիմներէն: Փոխադարձ էր իրենց գուրգուրանքը իրարու հանդէպ: Օտեան կը հիանար մանաւանդ առնական ոճին վրայ այս կարչնեղ, տձեւ, բայց բարի մարդուն, զոր հայակուկ եղենքը անհետ կորսնցուց:

ՎԵՐՋԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս տողերը զրեցի քանի մը գիծ տալու համար Երուանդ Օտեանի կեանքէն: Կենսագրութիւն մը չէր ասիկա, ոչ ալ ամբողջական ուսումնասիրութիւն մը: Տուածս ուրուագիծ մըն էր, ու ատաղձ մը Օտեանի գործը վաղը ուսումնասիրողին համար:

Երբ այս զրուածքը կը փակեմ, անգամ մըն ալ միտքս կուգայ Օտեանի մեղմէ բաժնուած գիշերը: Տունէն էր, որ դատուեցաւ մեղմէ, որովհետեւ չէր ուզեր, որ մէկը կայսրան երթայ: Կ'ուզէր տեղէ մը մեկնիլ անշուշտ, ու տեղ մը անշուշտ երթալ:

— Ո՛ր գիտէ մէյ մըն ալ ո՛ւր պիտի տեսնուինք,— ըսաւ ողջագուրուելու ատեն:

Ա՛հ, դառն է հիմա միտք բերել այդ հարցումը, որուն պատասխանը այն ատեն ալ չգրտանք.

— Ո՛ր գիտէ մէյ մըն ալ ո՛ւր պիտի տեսնուինք...

Կ Ա Ր Օ Տ

Գու դեռ չես մեկնել, իմ հրաշք տղաս, եւ գիտեմ շուտով դառնալու ես յետ. Բայց կարօտս արդէն փայլում է քեզ հետ, Օ՛, կարօտս այնպէս յորդիլ է, տղաս:

Ու փայլեղ արդէն ծանրանում եմ, տե՛ս, Քայլեղ քեքեւ կարօտս է գրկել, Ու կամքը կասել, հոգիդ մըրկել, կասել, կաշկանդել քեզ բաղեղի պէս:

Այնպէ՛ս կարօտ եմ, այնպէ՛ս կարօտ քեզ, կարծես քէ երբեք քեզ չեմ գրկել դեռ, կարծես քէ երբեք շուրքերըս-քիթեռ Շուրքերէդ-կրակ չի եղել հրկեզ: